ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍԱԲԻՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, պետական, հասարակական գորրծիչ Սաբիր Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ. 33 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԱԲԻՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, պետական, հասարակական գործիչ Սաբիր Ստեփանյանը ծնվել է 1933թ. հունվարի 13-ին ծառայողի ընտանիքում:

1951թ. ավարտել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, 1962թ.՝ Վորոնեժի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը:

1951-1954թթ. աշխատել է Քաջարանում, եղել է պաշարների հաշվարկման խմբում երկրաբան, հորատման երկրաբան, ապա Քաջարանի երկրաբանահետախուզական տեղամասի պետ, 1945-1955թթ.՝ Փխրուտի երկրաբանահետախուզական խմբի պետ:

1955-1957թթ. նա եղել է Ագարակի երկրաբանահետախուզական խմբի պետ, 1957-1958թթ. Հոկտեմբերյանի նավթի և գազի որոնման և հետախուզման խոր հորատման պետ:

1962-1964թթ. Վայոց Ձորի երկրաբանաորոնողական արշավախմբի պետ, 1964-1967թթ. խմելու ջրի հիդրոերկրաբանական արշավախմբի պետ /Էջմիածնի շրջան/:

1967թ. նշանակվել է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն, 1971թ.՝ Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի տնօրեն:

1977-1983թթ. եղել է «Հայոսկի» արտադրական միավորման տնօրեն, 1983-1986թթ.՝ ՀԽՍՀ գազաֆիկացման պետական կոմիտեի նախագահ:

Սաբիր Ստեփանյանը 1986-1990թթ. եղել է ՀԽՍՀ նյութատեխնիկական մատակարարման պետական կոմիտեի (Պետմատ) նախագահ, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահության անդամ:

1987թ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 11-րդ գումարման ժողովրդական պատգամավոր:

1988թ. դեկտեմբերի 8-ից եղել է Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման հանձնաժողովի անդամ:

1991-1992թթ. եղել է Թուրքիայում ԽՍՀՄ առևտրային ներկայացուցչի տեղակալ, 1993-1998թթ.՝ Ռուսաստանի Դաշնության էկոնոմիկայի մինիստրության Միջինասիական հանրապետությունների, Ղազախստանի և Հայաստանի հետ տնտեսական համագործակցության բաժնի վարիչ, ՀՀ և ՌԴ միջև առևտրատնտեսական համագործակցության հանձնաժողովի նախագահի տեղակալ:

1998թ. Սաբիր Ստեփանյանը վերադարձել է Հայաստան և նշանակվել «Հայոսկի» միավորման գլխավոր տնօրեն:

2002-2004թթ. թվականներին եղել է «Արմենալ» /Կամազ/ ԲԲԸ մատակարարման գծով տնօրեն:

Սաբիր Ստեփանյանը պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» /1966թ./ և «Պետական սահմանի գերազանց պահպանության համար» /1968թ./ մեդալներով, Աշխատանքային կարմիր դրոշի /1971թ., 1977թ./ և Ժողովուրդների բարեկամության /1989թ./ շքանշաններով, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով (2012թ.), «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո շքանշանով (2012) և ՀՀ վարչապետի հուշամեդալով (2013թ.):

1969թ. Սաբիր Ստեփանյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչում, եղել է ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի իսկական անդամ /2003թ./, Ագարակի և Հրազդանի պատվավոր քաղաքացի:

Սաբիր Ստեփանյանը մահացել է 2016թ. Երևանում:

ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, պետական, հասարակական գործիչ Սաբիր Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ. 33 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Թ. Ստեփանյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԱԲԻՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սաբիր Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԱԲԻՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սաբիր Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ